մասին ճառեր և աղօթքներ ունին Յուսեպ եպս. Երուսաղէմի, Բարսեղ Կեսարացի՝ որուն աղօթքը կը կարդացուի Վարդավառի երեկոյին, Յովհ. Ոսկեբերան իր Մատթէի մեկնութեան մէջ, Մովսէս Խորենացի, Զաքարիա կաթողիկոս և այլք, որոնք կը փառաբանեն Թաբորը։ Մեր մատենագրութեան մէջ վերև յիշուածներէն դուրս՝ կը գտնուի նաև ուրիշ ճառ մը՝ «Սրբասիրի Տեառն Եղիշէի քահանայի եւ ճգնաւոր կրօնաւորի եւ միայնակեցի ի Թաբոր լերին յայտնութիւն Տեառն առ Պետրոսեանց եւ ի մեծի աւուր Վարդաւառի» մակագրութեամբ։ Եղիշէ քահանան հաւանաբար Վարդանանց պատերազմին պատմիչը ըլլայ, վասն զի Արծրունի Թովմայ վարդապետն ալ իր Պատմութեան մէջ (էջ 27) նոյն անունով կը յիշէ զանի։ Եղիշէ քահանայ նշանաւոր մենակեաց մ'էր, որ պիտի փափաքէր ուխտի գալ Քրիստոսի Տնօրինական Ս. Տեղերը, և ինչպէս կը գրէ ճառին մէջ, ուրիշ համակրօն եղբայրներու հետ հետիոտն Թաբոր լեռը ելած ու աննման գրիչով մը նկարագրած է՝ ինչ որ տեսած է նոյն լերան վրայ։ Ճառին վերջին հատուածին մէջ կարճ տեղագրական մաս մը կը խօսի լերան սրբավայրերու, կրօնաւորներուն կենցաղին և պաշտամունքի մասին. կը յիշէ որ իր ընկերակիցներէն ոմանք փափաքած են հոն մնալ և հետևիլ անապատականութեան։ Եղիշէ քահանային այցելութիւնը կը պատահի թուականի մը՝ երբ լերան կրօնաւորական կեանքը և եկեղեցիներուն պայծառութիւնը հասած էր իր զենիթին։ Իր տողերէն կը հասկցուի թէ եկեղեցիները, զոր կը յիշէ յանուանէ, կը պատկանէին ընդհանուր քրիստոնէութեան, և իւրաքանչիւր համայնք ունէր իր ուրոյն վանքը և հիւրանոցը։ Ընդհանուր եկեղեցիներէն զատ կային նաև մասնաւոր եկեղեցիներ։ Եղիշէ քահանային ճառին վերջին հատուածը թանկարժէք յիշատակարան մ'է, որուն մէջ՝ եթէ ո՛չ յանուանէ, բայց պարզօրէն կը հասկցուի գոյութիւնը հայ վանքերու և եկեղեցիներու։ Նոյն հատուածին խիստ կարևոր մասերը աշխարհաբարի վերածելով կը դնեմ հոս, իրենց չահեկանութեան համար։

« . . . Մենք անձամբ գալով մեր աչքովը տեսանք, ոչ թէ առանձին՝ այլ շատ ընկերակիցներով, որոնցմէ ոմանք փափաքեցան հոն մնալ ի սէր Քրիստոսի, վասն զի հոն կար բազմութիւն մը սքանչելի եղբայրներու, որոնք աւելի հոգիով կ'ապրին քան թէ մարմնով։ . . . Թաբորը Գալիլիոյ ընդարձակ դաշտին մէջ